№ 219 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 **1901** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4 № 219

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական խուլ շրջանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գամառ-Քաթիպայի արձանի բացումը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական դէմքեր.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՒԼ ՇՐՋԱՆՈՒՄ

Քաղաքական աշխարհում շարունակվում է մի սպասողական, մի խուլ դրութիւն: Միջազգային ընդհարումները, որոնք այնքան սուր կերպարանք էին ընդունել, այժմ կարծես մեղմացել են և մօտ են իրանց խաղաղ ու հաշտ լուծման:

Սակայն մոխրի տակ ծխացող և չը շիջած կրակներ շատ կան, որոնք կարող են բռնկվել և հրդեհել եւրոպական և ասիական հորիզոնը: Ֆրանսիան մինչև այժմ չէ գտել բաւարար ելք այն լարված յարաբերութիւններից, որոնք ստեղծվել են նրա և Թիւրքիայի մէջ: Իսկ Թիւրքիան, չը վճռած այդ հարցը, բազմաթիւ առիթներ է հանդէս բերել ուրիշ նոյնպէս խոշոր հարցեր ծագելու համար: Ոչ եւրոպական Թիւրքիայի և ոչ Փոքր-Ասիայի մէջ բարեփոխութիւններ չը մտցրվեցին, ուստի դժգոհութեան սաղմերը միշտ գոյութիւն են պահպանում երկրի մէջ և սպասում են յարմար դէպքի իրանց մասին խօսեցնել տալու: Եւ արդարև Թէ Ֆրանսիական ու ռուսական մամուլը և Թէ առհասարակ եւրոպական հասարակական կարծիքը նուիրեցին Թիւրքիային և նրա մէջ տիրող կարգերին մի շարք յօդուածներ:

Խրատված անցեալ փորձերից մենք անկարող ենք լուրջ նշանակութիւն տալ այն յօդուածներին, որոնք լոյս են տեսնում Թիւրքիայի ներկայ քաղաքական վիճակի մասին, որովհետև եւրոպական պետութիւնների բռնած դիրքը որոշվում է յաճախ ընդհանուր քաղաքական տեսակէտների ոյժով և ազդեցութիւններով: Սակայն մենք ասպարէզի վրա տեսնում ենք մի շարք երևոյթներ, որոնք կարող են առիթ դառնալ անսպասելի բարդութիւնների համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Այժմ բերենք ստված հեռագիրների բովանդակութիւնը.

Քիշինեվից. Մի քանի տեղական արտակարգ հանգամանքների պատճառով անկարող լինելով ներկայ գտնվել, շնորհաւորում եմ ձեզ բոլոր հանդիսականներիդ հայկազեան գրականութեան յաւիտենական պարծանք՝ անմոռանալի Ռափայէլ Պատկանեանի մահարձանի բացումը: Նրա զօրաւոր մուսայի անմահ հոգին թող ներշնչէ նրա թանկագին սերնդի եւ ազգային բանաստեղծութեան փառաւոր դրօշակի արժանաւոր կրողների մէջ իրան, անմահ Գամառ-Քաթիպային յաւուրց անցողողող անձնուիրութիւն եւ եռանդուն ծառայութիւն արդարութեան, բարիի եւ սուրբ սիրոյ վսեմ գաղափարներին: Իսկ ձեզ, որ մասնակից էք եղել յուշարձանի կանգնելուն, ժաղթում եմ աստուածային երկնառաք օրհնութիւնը:

Արքեպիսկոպոս Ներսէս

Աստրախանից. Հայազգի բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի մահարձանի բացման առիթով օրհնում եմ անմահ երգչի յիշատակը, այդ գեղեցիկ գործի ձեռներէցին եւ մասնակցողներին:

Արիստակէս արքեպիսկոպոս

Շուշուց. Սրտանց մասնակցում եմ հայազգի անմահ բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի արձանի բացմանը, օրհնում եմ հանգուցեալի յիշատակը եւ նրա անձեռագործ մահարձանի երկրպագուներին:

Գրիգոր եպիսկոպոս Գառնակերեան

Երեւանից. Շնորհաւորում եմ ձեզ եւ Նախիջեւանի հասարակութեանը, որ այսօր մի վսեմ երախտագիտութեան պարտք է կատարում, յուշարձան կանգնեցնելով ազգային եւ մաւոր եւ բարոյական վերածնութեան բանաստեղծի թանկագին աճիւնի վրա: Հաւատացած եմ, որ նա վաղուց կանգնեցրել է իր անմահ «Մայր-Արաքսի»-ով անձեռագործ արձան պատանիների սրտերում: Օրհնում եմ հանգուցեալի արդիւնաւէտ գործունէութիւնը եւ այսօրվայ հանդէսի նախաձեռնողներին:

Արքեպիսկոպոս Սուքիաս

Թիֆլիսից. «Մշակի» խմբագրութիւնը, Պատկանեանի արձանի բացման առիթով, յայտնում է իր խորին յարգանքը դէպի նա, որ գիտէր կարդալ ժողովրդի սրտերը եւ իր տաղանդաւոր երգերով երգեց նրա ուրախութիւնները եւ վշտերը: Խմբագրութիւնը խընդրում է թարմ ծաղիկներից մի պսակ դնել յուշարձանի վրա:

Խմբագիր Քալանթար

Թիֆլիսից. Թող այս ձեռագործ մահարձանը ապագայ սերնդի սրտի խորքում յաւերժացնէ անմահ անունը մեր բանաստեղծի. ամէն:

Պոչեանց

Թիֆլիսից. Հայ ազգի վշտերի եւ տառապանքների աչուղի, Գամառ-Քաթիպայի մահարձանի բացման առիթով յայտնելով իր անչափ ուրախութիւնը, «Մուրճի» խմբագրութիւնը ցանկանում է, որ այս համեստ հանդէսը լինի իբրև խթան ընդոստուցիչ հայ հասարակութեան բարոյական վերածնութեան:

Կրասիլնիկեան, Սարգսեան, Լէո

Թիֆլիսից. «Լուսայի» խմբագրութիւնը ողջունում է անմահ եւ տաղանդաւոր հայազգի բանաստեղծի յուշարձանի բացումը:

Եալտայից. Առ ի սրտէ զգացմունքով ողջունում եմ ստուգապէս նշանաւոր օրը մեր կեանքում, որ զուրկ է գեղարուեստական վսեմ արտադրութիւններից, ողջունում եմ մասնաժողովիդ եւ այն ամենին, որոնք կանգնեցրին այսօր հրաշալի յուշարձան անապառ դիւթիչ բանաստեղծին: Թող ամուր եւ դիմացկուն լինի այս յուշարձանը դարերի աւերիչ փոթորկի դէմ, յուշարձան, որի ներքոյ հանգչում է հոյակապ Պատկանեանի աճիւնը, բայց չէ հանգչում նրա հոգին: Սա, որպէս աստուածային բարբառ, յաւիտեան կը հնչէ սերունդների սրտերում, հրաւէր* կարդալով դէպի գործունէութիւն եւ ինքնագիտակցութիւն:

Սմբատ Շահազիզ

Թիֆլիսից. Թանկագին Ռափայէլ, ձեռագործ է յարգողներիդ ձեռքով քեզ կանգնեցրած յուշարձանը, բայց յաւիտենական է մեր եւ բոլոր ապագայ սերունդների սրտերում ստեղծագործութեամբդ յօրինված յուշարձանը:

Սունդուկեանց

Թիֆլիսից. Ակնածութեամբ երկրպագանում եմ հայազգի մեծ բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի նուիրական աճիւնին նրա արձանի բացման առիթով:

Գէորգ Բարխուդարեան

Թիֆլիսից. Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ողջունում է Ռափայէլ Պատկանեանի մահարձանի բացումը, որի քնարը գեղեցիկ զգացմունքներ է զարթեցնում հայազգի մատաղ սերնդի սրտերի մէջ:

Հերթակալ հոգաբարձու Ամիրխանեան

Երեւանից. Երեւանի թեմական դպրոցի ուսուցչական խումբը ողջունում է ազգի վշտերի տաղանդաւոր երգչի մահարձանի բացումը՝ իբրեւ մխիթարական երեւոյթ ազգային ինքնաճանաչութեան:

Տեսչի փոխանորդ Տէր-Գաբրիէլեան

Թիֆլիսից. Մեծ քաղաքացի բանաստեղծի յուշարձանի բացման օրը արտայայտում ենք մեր համեստ բարեմաղթութիւնը. թող յաւիտեան կենդանի լինեն ժողովրդի վշտի երգչին ոգեւորող խորհուրդներն ու զգացումները եւ նրա գերեզմանի վրայի յուշարձանը թող գրական լինի, թէ բանաստեղծին ժողովրդի հետ միացնող կապը միշտ անխզելի կը մնայ:

Տեսուչ եւ ուսուցիչներ Ներսիսեան դպրանոցի

Էջմիածնից. Ժողովրդական անմոռանալի բանաստեղծի յուշարձանի բացման առիթով Էջմիածնի հոգեւոր ճեմարանը օրհնութեան զգացումով համակված դէպի նրա երախտիքը մասնակցում է այսօր մեծարելու նրա յիշատակը:

Տեսուչ Կարապետ վարդապետ

Շուշուց. Շուշու հայոց հոգեւոր դպրանոցի ուսուցչական խումբը ողջունում է Մայր-Արաքսի արտասուքի երգիչ՝ մեր հոյակապ բանաստեղծ Գամառ-Քաթիպայի յուշարձանի բացումը, որն իր քնարով զարթեցրեց սէր դէպի ազգը եւ նրա ճնշված որդիքը:

Բենիկ վարդապետ

Մոսկվայից. Խմված մեր սիրած բանաստեղծ Պատկանեանի յիշատակին հոգեհանդիստ կատարելու համար, խնդրում ենք ձեզ միացնել եւ մեր ուրախութեան անկեղծ զգացմունքները այն ընդհանուր ցնծութեան, որով վառված էք դուք, երբ ականատես էք մեր ազգային տաղանդաւոր երգչի եւ յարգելի ուսուցչի յուշարձանի հանդիսի բացման:

Մոսկվայի հայ ուսանողութիւն

Կիսլովոդսկից. Սատիկ ցաւում եմ, որ հոր գէր եղները, նորից սկսէ իր արտը մշակել: Եւ միայն այդ ժամանակ կը ցամաքեն սգաւոր մոր արտասուքները:

Ներկայ ժամանակներում մեր գրականութեան մէջ շատ է տարածված այս սիւժետը: Բայց այդպէս չէր յիսուն տարի առաջ. եւ Պատկանեանի այս երգը հայերի անմխիթար իրականութեան առաջին հեծեծանքն է: Դեռ հին հայկական հերոսների դարն էր այն ժամանակ. դեռ Վարդանը, Արամն էին տիրում հայի երեւակայութեան եւ գաղափարների վրա: Սակայն այդ իսկ ժամանակ բուն Հայաստանում անթիւ Գորգիներ եւ Զանաններ իրանց արիւնով եւ արտասուքով թրջում էին հայրենի հողը: Նրանց դեռ չէին ճանաչում. մեր շատ թոյլ զարգացած ազգային ինքնաճանաչութիւնը չունէր եւ չէր կարող ունենալ իր առաջ այսպիսի իրական մարդիկ: Մենք դեռ մտաւոր չունէինք, դեռ գաղափար չէինք կազմել թէ ինչ ենք մենք: Եւ սակայն, դեռ հենց այն ժամանակներում Գորգիների եւ Զանանների հարցը հրատապ էր, իր ամբողջ արիւնոտ իրականութեամբ ուշադրութիւն էր պահանջում:

Այն իսկ տարին, երբ գրվեց այս «Օրօրոցի երգը», Հայաստանի մի մասը—Շիրակ, Ալաշկերտ, ռուս-թիւրքական պատերազմի բեմ էր դարձել: Ռուսաց պատերազմները Ասիական Թիւրքիայում այն ահագին նշանակութիւնն են ունեցել հայերի համար, որ ամեն անգամ նրանք յարուցել են ազգային զգացմունքներ, զարթեցրել են մարդկային իրաւունքների հասկացողութիւնը: Պատերազմական մուխը այն պայծառ լոյսն էր, որ գալիս էր լուսաբանելու հայերի դրութիւնը մահմեդական լուծի տակ:

1853—1855 թուականների պատերազմներին մասնակցած մի ռուս զինուորական *) վերին աստիճանի մռայլ ու ցաւալի գոյներով է նկարագրում այդ դրութիւնը: Հայերին նա ներկայացնում է իբրեւ մշտապէս ջնջվող, դժբախտ մի ժողովուրդ, որին վիճակված է վերջնականապէս տրորվել ու ոչնչանալ քիւրդերի եւ ասիական այլ վայրենի ցեղերի մէջ: Թիւրքական եւ պարսկական կառավարութիւնները չը պիտի լինեն հայերի պաշտպանը. նրանք չափազանց թոյլ են եւ եթէ ուժեղ էլ լինեն, դարձեալ անկարող են կանգնեցնել այն կոտորածը, որին ենթարկված են հայերը Զինգիզ-խաների եւ Լենքթեմուրների ժամանակից: Բայց ո՞վ պիտի պաշտպանէ հայերին եւ միւս փոքրիկ քրիստոնեայ ցեղերը: Հարկաւոր է ոյժ, ասում է ռուս գեներալը, հարկաւոր է, որ քրիստոնեայ պետութիւնները ոչ թէ խօսքով, այլ իրական գործով պաշտպան հանդիսանան: Հեղինակի հաւաքած տեղեկութիւններից երեւացել է, որ պատերազմի ժամանակ մեծ թիւով հայեր են կոտորվել. նա ականատես էր թէ ինչպէս ամեն կողմից հայեր էին գալիս ռուսաց բանակը, աղաչում էին գնալ, նուաճել իրանց երկիրները ու այդպիսով ազատել իրանց քրդական բարբարոսութիւններից, կոտորածներից: Եւ դեռ որքան ծանր պիտի լինի հայերի դրութիւնը, երբ ռուսները—ասում է հեղինակը—կը հեռանան իրանց գրաւած երկրներից, թողնելով դժբախտներին ճակատագրի կամքին: Ոչ, աւելացնում է նա, եւրոպական օգնութիւնը հաղիւ թէ երբ եւ իցէ գայ ազատելու այս ճնշված ու ստրկացած ժողովուրդը. մնում է, որ իրանք հայերը սովորեն պաշտպանել իրանց՝ զէնքի ոյժով...

Թողնենք այժմ ռուս հեղինակին եւ դիմենք մեր այն ժամանակվայ գրականութեան: Այդ արիւնոտ իրականութիւնը ոչինչ արձագանք չէ գտել նրա մէջ: Կարծես ոչինչ չէ պատահել. կարծես հայութեան սրտից մի կաթիլ անգամ արիւն չէ հոսել: Ուրիշները տեսնում են, ուրիշները խղճում են, զուշակում մռայլ ապագան, իսկ մենք դեռ երգում էինք Արաքսէսի եւ Սաթինիկի հարսանիքը, անհետացած դարերի խորքից Արամեան գնդեր էինք կանչում եւ նրանց զօրախաղով զուարճանում կամ թէ չէ՝ երկար ու բարակ վիճում էինք թէ արդեօք ս. Հոգին միայն Հօրից է բղխում թէ Հօրից ու Որդուց...

Եւ միակ գրական երկը, որ ժամանակից դառն իրականութիւնն է երգում, Ռափայէլ Պատկանեանի այս օրօրոցի երգն է: Ճիշդ է, նա չէ ցոյց տալիս թէ որտեղ էին ապրում Գորգին ու Զանանը, ո՞ր պետութեան հպատակ քուրդն է հողագործ հայի կուրծքը նետով շամփրում եւ տանում նրա պարարտ եզները *), բայց դա կարեւոր էլ չէ: Դէպքը կարող է պատահած լինել ոչ թէ Թիւրքիայում, այլ, դիցուք, Պարսկաստանում: Նշանաւորը այդ չէ. նշանաւորն այն է, որ հարազատ, դարաւոր իրողութիւնն է իր արիւնոտ կերպարանքը ցոյց տալիս այդ ոտանաւորի մէջ, որ այդ ոտանաւորը լոյս է տեսնում 1855-ի պատերազմի ժամանակ եւ լիովին համապատասխանում է այն դրութեան, որի մէջ էր Թիւրքաց Հայաստանը: Հին ազգային ցաւի դէմ առաջարկվում է նոյն միջոցը, որ միակ հնարաւորն է համարում եւ ռուս գեներալը—

*) Генералъ-маіоръ Лихутинъ—"Русскіе въ Азіатской-Турціи", Спб. 1863.

*) Ճիշված է „սրահոս Երասխը". բայց այս գետը երեք պետութիւնների հողերն է քերում:

անկարող եմ ներկայ լինել ազգային երգչի արձանի բացմանը. մեծ եւ հասարակական պարտականութիւն է յարգել յիշատակը—կանգնելով արձան. անշուշտ մենք արտայայտում ենք մեր երախտագիտութեան զգացմունքները, սակայն ամենալաւը կը լինէր յիշել այսօրվայ խորհրդաւոր օրը, այն մտքերը եւ գաղափարները, որ քարոզում էր, որով ցաւում էր բանաստեղծը։

Վառվառէ Քանանեան

Մոսկվայից. Ողջունում եմ ժողովրդական մեծ բանաստեղծի յուշարձանի բացումը։ Փառք եւ պատիւ նախաձեռնողի եռանդին եւ տաղանդաւոր քանդակագործին։

Երդուեալ հաւատարմատար Տէրեան

Մոսկվայից. Հոգեպէս ուրախ ենք մեր պաշտելի հօր մահարձանի բացման առիթով. անկեղծօրէն ցաւակցում ենք, որ չենք կարող ներկայ գտնվել։

Գաբրիէլ, Եղիսաբէթ, Մարիամ, Աշոտ

Պետերբուրգից. Ակնածութեամբ խոնարհվում ենք մեր հօր յիշատակի առաջ. ցաւում ենք, որ ուշ իմանալով արձանի բացման օրը, անկարող ենք լինել ներկայ։

Սանդուխտ եւ Յովհաննէս

Բալախանից. Ցանկանալով միացնել մեր սրտագին յիշողութիւնը անմոռանալի բանաստեղծ Գամառ-Քաթիպայի անուան հետ, շտապում ենք խորին ուրախակցութիւն արտայայտելու թանկագին անմահ բանաստեղծի յուշարձանի բացմանը։

Ռուսաց նաւթարդիւնաբերական ընկերութեան ծառայողներ

Ադստաֆայից. Սրտագին զգայմունքով մեծարելով անմոռանալի բանաստեղծի յիշատակը՝ միանում եմ այսօրվայ հանդէսին, թող ծաղկեն մանուկ սերնդի սրտերի մէջ նրա ձեռքով սերմանված բարի սերմերը եւ թող յարուցանէ Աստուած նոյնանման մշակներ ի փառս հայ գրականութեան։

Գարեգին վարդապետ Յովսէփեան

Երեւանից. Մասիսի ստորոտից եւ Արաքսի ափերից ողջունում ենք մեծ բանաստեղծի յուշարձանի բացումը, թող նրա պոէզիան առաջնորդող աստղ լինի ժամանակակից հայ երիտասարդութեան համար։

Մի խումբ երկրպագուներ

Գանձակից. Լիովին համակրում եմ ձեր նախաձեռնութեան. թող յաւիտեան օրհնեալ լինի բանաստեղծի յիշատակը։ Մաղթում ենք Ամենաբարձրեալին, որ տայ նրա ընտանիքին մխիթարութիւն եւ երկարակեցութիւն։

Թեմուրեաններ

Պետերբուրգից. Մնված լինելով մեր բանաստեղծի անմահ երկերով՝ խորին ակնածութեան եւ երախտագիտութեան հարկ ենք մատուցանում մեր ժողովրդի հանգուցեալ երգչին նրա յուշարձանի բացման հանդիսաւոր օրը։

Ուսանողութիւն եւ գաղութ

Թիֆլիսից. Թող սուրբ լինի ապագայ սերունդների մէջ բարի եւ ճշմարտութեան քարոզիչ՝ բանաստեղծ Գամառ-Քաթիպայի յիշատակը։ Պատիւ ձեզ, որ կանգնեցրիք յուշարձան ի փառս այն անձեռագործ յուշարձանի, որ բանաստեղծն ինքը կանգնեցրեց իրան։

Բժշկապետ Նաւասարդեան

Հանքային ջրերից. Անհուն շնորհակալութեամբ եւ անկեղծ սիրով լցուած դէպի ազգի անմահ բանաստեղծը, անկեղծօրէն ողջունում եմ յուշարձանի բացման հանդէսը, իբրեւ ազգային ինքնաճանաչութեան երեւոյթ։

Բառնաբաս

Եալտայից. Թող համեստ յուշարձանը իբրեւ իրական ապացոյց ծառայէ գրչի ստեղծագործող ոյժին եւ այն բանին, թէ ժամանակակիցները գիտակից են գեղարուեստագէտ-բանաստեղծի մեծութեանը. ողջունում ենք մեծ հանդէսի օրը։

Տէր-Փանոսեան Յովհաննէս, Պօղոս Յակոբ, Թամանեան Կարապետ, Մասլով Օգսենտ, Ալաճալեան Գրիգոր, Կարստեան Զաքար, Պօղոս Մկրտիչ։

Կարսից. Մեծ եւ անմահ հայազգի բանաստեղծ Ռափայէլ Պատկանեանի մահարձանի բացումը ողջունում ենք, յուշարձանի առաջը ծունր դնելով աղօթում ենք Ամենաբարձրեալ Աստուծուն՝ ողորմած լինել դէպի հանգուցեալը, թող նրա անապական ոգին դարէդար ոգեւորէ ապագայ սերունդը։

Կիւրեղ վարդապետ, Տէր-Մինաս քահանայ, Վառվառա, Սեդրակ Գրիգորեանց, Յ. Տէր-Պողոսեան, Միրիմանեան, Տէր-Անանէքեան, Բաղդասարեան, Խալաթեան, եւ այլն։

Եալտայից. Պատկանեանի յուշարձանի բացման օրը մենք, խորապէս շարժուած անմոռաց բանաստեղծի անունով՝ բացագլուխ կանգնում ենք նրա առաջ պատկառանքով. մենք ողջունում ենք այդ հանդէսը, ինչպէս ստեղծագործող ոյժի յաղթանակ, որ հոգի էր ներշնչում մեզ եւ մեր մանկութեան օրերում, եւ այսօր։ Յաւիտենական յիշատակ սիրելի երգչին։

Իզմիրեան, Բերինեան, Լազարեան, Աբրամեան, Ստեփանեան, Սարիբէգեան, Բաբասինեան, Յակոբեան, Առաքելեան, Մլինասեան, Բօղաճեան։

Սիմֆերօպոլից. Ցաւում եմ, որ ակարութեանս պատճառով միայն հոգով պիտի կարողանամ ներկայ գտնվել Մայր Արաքսի անմահ երգչի արձանի բացման եւ օրհնութեան ազգային տօնին։

Գէորգ Դոդոխեան

Մոսկվայից. Ողջունում եմ ժողովրդական մեծ բանաստեղծի արձանի բացումը։ Ցաւում եմ, որ անկարող եմ անձամբ ներկայ լինել հանդէսին։

Ուսուցչապետ Խալաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, հինգշաբթի, հոկտեմբերի 4-ին, կաթնատնտեսութեան ժողովում կը կարդացվեն զեկուցումներ Ան. Քալանթարի՝ մածնի մանրադիտական հետազօտութեան մասին, Գ. Ալիբէգեանի՝ քաղաքի կաթի վրա հսկողութիւն նշանակելու խնդրի մասին եւ կը քննվեն մի շարք հարցեր՝ վերաբերեալ կաթնային արդիւնքների բարւոքման գործին։

—

Երկուշաբթի, հոկտեմբերի 1-ին, Թիֆլիսի բէյլական դպրոցում տեղի ունեցաւ տարեկան ակտ, որին ներկայ էին Վրաստանի էկզարխ Ֆլավիան, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Զաւադսկի, քաղաքագլխի պաշտօնակատար Շեստակով եւ այլ հրաւիրված անձինք։ Դպրոցի դիրեկտոր Տիրիւտին համառօտ տեղեկութիւններ հաղորդեց դպրոցի դրութեան մասին անցեալ ուսումնական տարվայ ընթացքում, իսկ ուսուցիչ Գուլտէ կարդաց մի ընդարձակ բէֆէրատ «Վրաստանի եւ Ռուսաստանի յարաբերութիւնների պատմական տեսութիւն եւ Վրաստանի միացումն Ռուսաստանին 1801 թ.»։ Ապա դպրոցի աշակերտական երաժշտական խումբը երգեց եւ նուագեց զանազան երգեր։ Ակտը վերջացաւ աշակերտներին պարգեւներ բաժանելով։

—

Երեքշաբթի, հոկտեմբերի 2-ին, կայացաւ կաթնատնտեսական ժողովի երկրորդ նիստը, որին ներկայ էին 45 անձ։ Կարդացվեցին երեք զեկուցումներ—Ն. Բլաժինի, Աւ. Քալանթարի եւ Ն. Կանցելմախերի։ Բլաժինի զեկուցումը վերաբերում էր կովկասեան այն պանիրներին, որոնք պատրաստվում են շվէյցարական եղանակով։ Բլաժինի կարծիքով կովկասեան պանիրը ունի մեծ ապագայ, որովհետեւ ապացուցել է, որ կարող է դուրս բերել բարձր յատկութեան ապրանք։ Սակայն այժմ պատրաստվող պանիրների մէջ դեռ շատ պակասութիւններ կան, որոնց պէտք է վերացնել, որպէս զի մեր երկրի համար կարեւոր այդ արդիւնագործութեան զարգացումը գնայ աւելի արագ եւ ապահով կերպով։ Պակասութիւնների թւում նա հաշուեց այն, որ մեր պանիրները չափազանց ցամաք են դուրս գալիս, միմեանց նման չեն տեսքով ու համով եւ պարունակում են իրանց մէջ մեծ քանակութեամբ միջակ եւ անբաւարար կտորներ։ Զեկուցանողը առաջարկեց առանձին ուշադրութիւն դարձնել լաւ կաթ ստանալու եւ պանրի պատրաստութիւնը բարւոքելու գործի վրա։ Աւ. Քալանթար իր զեկուցման մէջ խօսեց այն նոր կաթնային արդիւնքների մասին, որ կարելի է պատրաստել Կովկասում։ Այդ արդիւնքների թւին են պատկանում գօրգօնզօլ կոչված պանիրը, որ մեծ գին ունի անգլիական վաճառանոցում, խտացրած կաթը եւ սերը եւ ոչխարի կաթից պատրաստած պանիրները։ Բացի այդ նա դարձրեց ժողովականների ուշադրութիւնը աճառ կամ բուկ կոչված ծառի մի նոր գործադրութեան վրա, որ կարող է շատ շահաւէտ լինել Կովկասի համար, որտեղ այդ ծառը բուսնում է մեծ քանակութեամբ։ Ռուսաստանը բերել է տալիս մեծ քանակութեամբ աճառի փայտ՝ տակառներ չինելու համար, որոնց մէջ պահվում է իւղը եւ ուղարկվում դէպի վաճառանոցները։ Եթէ Կովկասի աճառը կարողանայ պիտանի լինել այդ գործի համար՝ կը բացվի վաճառահանութեան համար մի նոր նիւթ։ Անանաբոյժ Կանցելմախերը զեկուցեց ոչխարների մէջ տարածված մի հիւանդութեան մասին, որ կոտորում է ոչխարների 10—15%-ը եւ որի պատճառն է մի բարակ ճիճու։ Կանցելմախերը ցոյց տուեց եւ բժշկութեան միջոցները։ Զեկուցումների առիթով տեղի ունեցան վիճաբանութիւններ եւ հարցապնդումներ, որոնց մասնակցեցին ժողովականներից շատերը։ Նիստը վերջացաւ ժամի 11-ին։

—

Ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեան համաձայն, Աստրախանի նահանգի բժշկական տեսուչ դոկտոր Մ. Առատամեան ներկայումս հետազօտութիւններ է կատարում Պարիզում, Պաստեորի ինստիտուտում, ձկնային թոյնի վերաբերմամբ։

—

Կիրակի, սեպտեմբերի 30-ին, Թիֆլիսի եւ Քութայիսի նահանգների ազնուականութիւնը «Ֆանտազիա» այգում մի ճաշկերոյթ տուեց ի պատիւ Ռուսաստանի ներքին նահանգներից հիւր եկած ազնուականութեան պարագլուխների։ Այն չինութիւնը, ուր տեղի ունէր ճաշկերոյթը, եւ նրա պատշամբը գեղեցիկ զարդարված էին կանաչով եւ ծաղիկներով։ Նուագում էին թէ եւրոպական եւ թէ ասիական երաժշտական խմբեր։ Ճաշի ժամանակ առաջարկվեցին Թագաւոր Կայսրի, Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլայեվիչի, յունաց թագուհի Օլգա Կոնստանտինովնայի, ռուս ազնուականութեան ներկայացուցիչների կենացները, որոնք ընդունվեցին բուռն ոգեւորութեամբ։ Ճառեր խօսեցին նաեւ Պետերբուրգի նահանգական ազնուականութեան պարագլուխ Զինովեվ, Պենզայի ազնուականութեան պարագլուխ Գէվլիչ եւ Կիեւի ազնուականութեան պարագլուխ իշխան Բէպնին։

—

Տիկին Զէրնէցկայայի կոնցէրտը գրաւել էր մեծ բազմութիւն դէպի արտիստական ընկերութեան դահլիճը։ Շնորհալի տիկինը մեծ բաւականութիւն պատճառեց հանդիսականներին իր վարպետ, մտածված եւ հմուտ երաժշտութեամբ։ Կոնցէրտի ծրագիրը պարունակում էր բազմատեսակ կտորներ։ Մանաւանդ ապատութիւն թողեցին Շուբերտ-Լիստի «Անտառի արքան» եւ Զայկովսկու «Եւգենի Օնեգինը», որոնք տուին տիկնոջ առատ նիւթ ցոյց տալու իր նուագելու հմտութիւնները։ Տեխնիկայի կողմից բնորոշ էր եւ Գունո-Լիստի յայտնի Faust fantaisie-ն։ Նրան աջողվում է մեծ ոյժ տալ նուագած կտորներին, երբ անհրաժեշտ է

վրէժ, ինքնապաշտպանութիւն։ Բանաստեղծը կարող էր այդ արիւնի հոտը օդի մէջ զգալ, նրան հարկաւոր էլ չէր աշխարհագրական այն լայնութիւնը եւ երկարութիւնը, ուր այդ եղեռնագործութիւնն է կատարվել։ Հայի դաբաւոր ցաւն էր խօսում նրա մէջ, այն ցաւը, որ կրծում, ոչնչացնում էր նրա բախտն ու բարօրութիւնը։

Ահա կանցնի այս օրօրոցի երգի ժամանակից 20—22 տարի, կը սկսվի 1877—1878 թւականների պատերազմը եւ մեր բանաստեղծը կը դառնայ թիւրքահայերի դժբախտութիւնների ամենապերճախօս թարգմանը. նոյն այս Գորդիի եւ Զանանի պատմութիւնը, նոյն այս արիւնը, որբերի եւ թալանվածների ցաւոտ ողբը, վրէժի եւ տղամարդութեան այս հրաւէրները կը ցընցեն նրա քնարի լարերը։

1855-ին արդէն երեւում էր 1877-ի Գամառ-Քաթիպան...

VII

Ուսանողութեան ժամանակաժիջոցում բոլորովին պարզվեց Ռափայէլ Պատկանեանի բանաստեղծական դէմքը։ Մինչեւ 1860 թւականը երեւացին նրա բոլոր ստեղծները, նրա երկրպագութեան բոլոր առարկաները։ Այնուհետեւ, մինչեւ կեանքի վերջը, նա նոր, հիմնաւոր ստրբերութիւն կազմող բան չաւելացրեց իր այդ դէմքի վրա։

Ուստի այստեղ տեղն է դնել հարց.—ինչ տեսակ բանաստեղծ էր Ռափայէլ Պատկանեանը։

Սա մի շատ կարեւոր հարց է, այն էլ ոչ միայն Պատկանեանի վերաբերմամբ։ Պատասխանել այդ հարցին՝ նշանակում է ամբողջ ռուսահայ գրականութեան համար մեծ կարեւորութիւն ունեցող մի հարց դնել հրապարակում։

Կան մարդիկ, որոնք, ռուսահայերի գրականութեան մասին խօսելիս, մի տեսակ անբաւականութեամբ, կարծես չը հաւանելով, շեշտում են, որ ռուսահայերը իսկական գեղարուեստ չունեն իրանց գրականութեան մէջ, որ մեր գեղարուեստը տենդենցիոզ է, որ նա հրապարակախօսութիւն է եւ ոչ թէ մաքուր գեղարուեստ։

Մենք չենք հերքում, որ մեր գրականութեան վերաբերմամբ պէտք է գործ ածել այդ բառերը—«տենդենցիոզ», «հրապարակախօսութիւն»։ Բայց մենք կամենում ենք, որ մի քիչ ուղիղ հասկացողութիւն կազմվի մեր այս ուղղութեան մասին։ Արդեօք միմիայն այն հանգամանքը, որ ռուսահայն հասարակական գաղափարներ է դնում իր բանաստեղծութիւնների, իր երգերի մէջ, իրաւունք տալիս է ընդհանուր գրականական տեսակէտից արհամարհել նրա գեղարուեստը։

Հետեւելով մեր աշխարհիկ գրականութեանը՝ նրա ծագման առաջին օրից, մենք տեսնում ենք, որ այդ, տենդենցիան է գլխաւոր հիմքը կազմում նրա մէջ։ «Արուեստ արուեստի համար» նշանաբանը գրեթէ գոյութիւն չէ ունեցել մեզանում։ Մեր առաջին վէպը—«Վէրք Հայաստանի»—խիստ տենդենցիոզ է. մեր ամենանշանաւոր վիպագրող Րաֆֆին իր բազմաթիւ գործերի մէջ քարոզիչ է, հրապարակախօս է։ Ռափայէլ Պատկանեանի, Միքայէլ Նալբանդեանի, Սմբատ Շահազիզի բանաստեղծութիւնների մէջ հասարակական իդէալներն են խօսում. դրանք հրապարակախօսութիւններ են ոտանաւորով։ Գրականութեան ոչ մի ճիւղ մեզանում այնքան գրաւիչ չէ եղել շատերի համար, այնքան ուժեղ, տաղանդաւոր ներկայացուցիչներ չէ տուել, ինչպէս հրապարակախօսութիւնը. Նազարեան, Նալբանդեան, Արծրունի այնքան բարձրացրին հայերէն հրապարակախօսութիւնը, որ մենք կարող ենք պարծենալ նրանով։ Դրա հակառակ, եթէ եղել են մեզանում «արուեստը արուեստի համար» սկզբունքով ղեկավարվողներ, դրանք աջողութիւն չեն էլ ունեցել, գոնէ չեն կարողացել ուշադրութիւն գրաւել։

Այսպէս է ռուսահայ գրականութիւնը։

Այդ ընդհանուր, հիմնական ուղղութիւնը հասկանալու համար մենք պիտի նախ եւ առաջ նկատի առնենք թէ ինչ հանգամանքների մէջ, ինչ ազդեցութիւնների տակ առաջ եկաւ մեր նոր, աշխարհական գրականութիւնը։ Ի՞նչ տեսակ մարդիկ էին, ինչ տեսակ միջնավայրում էին աճել, զարգացել մեր այն առաջին երախտաւորները, որոնք լեզու ստեղծեցին մեզ համար, հրապարակախօսութեան, բանաստեղծութեան, վիպագրութեան հիմքը դրին մեզանում։ Ի՞նչ էր, վերջապէս, ժամանակը, այն հզօր գործօնը, որ իր կնիքն է դնում մարդկային դործերի վրա։

Մենք գիտենք, որ հայ ուսանողութիւնն էր մեր գրականութեան առաջին հիմնադիրը *). տեսանք թէ որտեղ էին ապրում եւ գործում այդ առաջին պիօներները։ Դօրպատ, Մոսկվա, Պետերբուրգ—սրանք մտաւոր կենտրոններ էին, ուր այն ժամանակները անհամեմատ ուժեղ, քան այլ տեղերում, արտայայտվում էին դարի մտաւոր հոսանքները։ Այդտեղ էլ հայ ուսանողները տոգորվում էին իրանց ազգին ծառայելու գաղափարներով։ Անմիջապէս նրանց վրա ազդում էր ռուսական մտաւոր շարժումը. բայց գրական ազդեցութիւնը աւելի ընդհանուր էր, որովհետեւ առաջաւոր ռուս գործիչներն էլ իրանց կողմից արեւմտեան ազդեցութիւնների տակ էին առաջանում, ցոյց տալիս իրանց ինքնուրոյն ստեղծագործական ընդունակութիւնը։

Ընդունելով, որ մեր գրականութիւնը սկիզբ առաւ 1850-ական թւականների հետ միասին **), մենք պիտի տեսնենք, թէ այն ժամանակները ինչպէս կարող էին ազդել մտքերի վրա։

Գաղափարների այն ծայրայեղ լարումը, որ 1848-ի յեղափոխութիւնը տարածեց Եւրոպայում, չը մոռացվեց, թէեւ յեղափոխութիւնը իրանից յետոյ բերեց սաստիկ հալածանքներ ազատ մտքի եւ մարդկային իրաւունքների դէմ։

Մտքերի վրա ազդում էր այն գրականութիւնը, որ այնքան ճոխացել էր յեղափոխութիւնից առաջ եւ նրա ժամանակ։ Եթէ մենք նայենք այդ գրականութեան, կը տեսնենք որ հասարակական գաղափարների այդ վառ, եռանդուն ժամանակներում նա ամբողջապէս տենդենցիա էր, հրապարակախօսութիւն։ Այսպէս էր «Երիտասարդ Գերմանիայի» գրականութիւնը, այսպէս էր Աւստրիայում, Իտալիայում։ Կրակոտ ժամանակներում, երբ մարդիկ զբաղվում են կուելու, բարեկարգութեան, ազատութեան համար ամենախիստ պայքար մղելու անհրաժեշտութիւնը, չէ կարելի բաւականանալ ասարիւն, անառարկայ երգերով, որքան էլ դրանք համապատասխանեն «արուեստը արուեստի համար» հասկացողութեան։

(Որ շարունակվի)

*) Ուսանողութիւն մենք այստեղ չենք հասկանում բառի նեղ մտքով. այդ անուան տակ մենք նկատի ունենք նրանց, որոնք այդ միջոցին ուսանող չէին, բայց եղել էին դրանից առաջ։

**) Սրբովեանի «Վէրք Հայաստանին» թէեւ գրված է 1840-ին, բայց տպվեց 50-ական թւականներին։

ներկայացնել հոգու բուռն յուզմունքներ եւ ալէկոծութիւններ. նա նրբացնում-մեղմացնում է երաժշտութիւնը, երբ ցանկանում է ցոյց տալ քնքոյշ եւ տխրազգաց տրամադրութիւն։ Ձերնեցկայա նուագեց իր յօրինած Տարանտելլա, որ մէկն է նրա հեղինակած 30 պիեսներից. Հասարակութիւնն ընդունեց շնորհալի դաշնակահար տիկնոջը բուռն ծափահարութիւններով։

—

Երեքշաբթի, հոկտեմբերի 2-ին, քաղաքային խորհրդի դահլիճում տեղի ունեցաւ կովկասեան բժիշկների հանձնաժողովի նիստը, որի ժամանակ կարդացուեցին երեք զեկուցումներ մալարիայի մասին։ Կարդացողներն էին բժիշկներ՝ Կրիվեան, Տրիանդիֆիլիտիս եւ Խարազով։

—

Տնայնագործական հանձնաժողովը բացվելու է Թիֆլիսում հոկտեմբերի 9-ին, երեկոյեան 9½ ժամին։ Երկրագործութեան մինիստրի կողմից հանձնաժողովի նախագահ նշանակված է Ա. Փիրուզեան, նախագահի օգնական—Պետերբուրգի հիւսիսային գիւղատնտեսական ընկերութեան նախագահ Աւ. Քալանթար, իսկ քարտուղար—Ա. Սոկոլով։

—

Այս տարվայ ընթացքում պատահած հրդեհների պատճառով, որոնց զոհ գնացին խոշոր ջրաղացներից շատերը, Մոսկվայի առեւտրական շուկայում, ինչպէս հաղորդում են Պարիզի լրագրիները, սաստիկ բարձրացել է ալիւրի գինը։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ձեզ յայտնի է, որ այստեղի նաւթագործները կազմեցին սինդիկատ՝ նաւթի առեւտուր անելու համար։ Առ այժմ սինդիկատին մասնակցում են մօտ 10 ֆիրմա, բայց հաւանական է, որ ցանկացողների թիւը աւելի բազմանայ։ Սինդիկատը հէնց առաջին օրից յայտարարեց հոկտեմբեր ամսվայ վաճառելի նաւթի գինը 7¼ կոպէկ Բալախանիում եւ 7½ կոպէկ քաղաքում, մինչդեռ մինչեւ այդ՝ 6¾ կ. գծուարութեամբ էին առաջարկում։ Թէպէտեւ սինդիկատը, հայաձայն կազմած արձանագրութեան, պիտի գոյութիւն ունենայ մինչեւ 1901 թուի փետրվարի մէկը, բայց հաւանական է, որ եթէ այս փորձը աջող լինի, շարունակվի նորից՝ մինչեւ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսը»։

—

ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում են. «Այս տարի Աղ-Սու գիւղի մօտ Ստեփան Քալաչեան եւ ընկերների բաւական մեծ տարածութեան վրա ցանած բամբակի սերմի փորձը ցոյց տուեց, որ շատ ընտիր բամբակ է ստացվում։ Բերքը առատ էր»։

—

ԲԱԳՈՒՑԻՑ մեզ գրում են. «Երկար անձրեւներից յետոյ վերջապէս սեպտեմբերի 8-ից նորից արեգակի երես տեսանք։ Վերջին հեղեղը, որ տեղի ունեցաւ նոյն ամսի 20-ին, մեծ վնասներ հասցրեց քաղաքի շատ տներին եւ խանութներին, իսկ Արժենիկենդ կոչված քաղաքամասում փլվեց մի տուն եւ, ինչպէս պատմում են, մարդկանց զոհեր էլ եղան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Բոստոն, սեպտեմբերի 22-ին

Ինչ որ ալ լինէն անիշխանականներու դէմ ձեռք առնուելիք միջոցները, Մաք-Կինլիի համբաւը շատ բան պիտի պարտի Ցօլկոցի սոնրին։ Նախագահը երկու տարիէն գործէ պիտի քաշուէր. թէեւ երկրին սահմանադրութիւնը որոշ օրէնք մը չունի, սակայն աւանդական սովորութիւն մը վճռեր է, որ նախագահը երրորդ շրջանի մը համար ընտրելի չը ներկայանայ եւ Մաք-Քինլի իր բարեկամներու առաջարկութեան եւ թախանձանքին պատասխաներ էր, թէ ինք իր երկրորդ շրջանի վախճանին հասարակ կեանքի պիտի վերադառնայ։ Ամերիկայի համար պաշտօնէ դուրս հին նախագահներ տեսակ մը ծանրութիւն են, տխուր տպաւորութիւն գործող անձեր, երբեմն մեծ եղած ոչնչութիւններ։ Հիմա դեռ կապրի Ռիվլընա, նախորդ նախագահը, որ իր ժամերը ձուկ որսալով կանցունէ։ Եղած են քաղաքական գրողներ, որ առաջարկած են պաշտօնը լրացնող նախագահներու աթոռ մը տալ ծերակոյտին մէջ կամ ուրիշ կարգադրութիւն մանել, որպէս զի տարիներով երկրին զեկը ձեռքերնին բռնող մարդիկ կրնան կրկին օգտակար ծառայութիւն մատուցանել հայրենիքին, սակայն մինչեւ հիմա նախագահները, երբ հրաժեշտ կուտան Ուաշինկթընի, քաղաքական մահուան կը դատապարտուին, տեսակ մը պատմական հետաքրքրութիւններ կը դառնան։ Սովորութիւնը եւ կուսակցական նկատումներ կը ստիպեն, որ նոյն իսկ հանրային կենսական խնդիրներու մասին անտարբեր լռութիւն մը պահեն։ Այս մասին բացառութիւններ եղած են, ինչպէս Բէնժամէն Հարիսընը, որ Ֆիլիպեանները գերելու քաղաքականութեան դէմ բողոքեց մէկ անգամ, իսկ Ռիվլընի հանճարը եւ քաղաքական փորձառութիւնը ունեցող մարդը քանի անգամ մեծ ճգնաժամերու մէջ տեսեր է իր հայրենիքը, սակայն խրատի, զգուշութեան կամ յորդորի բառ մը չէ ելեր իր բերնէն։ Ատրճանակին գնդակը այս կենդանի մահէն փրկեց Մաք-Քինլին։

Ուրիշ իրողութիւն մը կայ սակայն։ Մաք Քինլիի քաղաքականութեան բարեկամները կը պնդեն թէ մեռնող նախագահը դեռ կատարած չէր իր սկսած գործը, դեռ կարգադրելու էր Ռուպայի խնդիրը, Ֆիլիպեան խնդիրը, մանաւանդ առեւտրական կարեւոր դաշնադրութիւններ, ինչպէս նաեւ Նիքարակուայի ջրանցքին խնդիրը։ Ամերիկայի մէջ Մաք-Քինլիի մաքսապաշտ քաղաքականութիւնը հանրածանօթ է. ստոյգ է նաեւ թէ Ռիվլընի ժամանակի տնտեսական տագնապներէ վերջ, երբ ծանր մաքսերու ջատագով նախագահ մը անցաւ պաշտօնի գլուխ, երկրին տնտեսական վիճակը անակնկալ մեծ փոփոխութիւններ կրեց։ Մակ-Քինլիի վարչութեան տարիները առեւտրական աջողութեան, նիւթական շահերու պատմական շրջան մը կը կազմեն, որուն նրմանը հին աջող շրջաններու մէջ չէ կարելի գտնել։ Վիճակագրեր ցոյց կուտան թէ այս մի քանի տարուան միջոցին Միացեալ-Նահանգաց առեւտուրը հսկայական ծաւալ է ստացեր, երկիրը տիրացեր է անհուն հարստութեան, արտածելով չը տեսնուած քանակութեամբ ապրանք ու արտիք։ Սակայն հակառակ այս աջողութեան երկրին նիւթական շահերուն վրա ժառանգներ ամիսներէ ի վեր նկատեր են թէ ծանր մաքսերը այլ եւս չեն համապատասխաներ երկրին փոխուած պայմաններուն։ Կազմուած են հակայ ընկերութիւններ, որ կը շահագործեն մաքսերը այստեղի ժողովուրդը կողոպտելով եւ Եւրոպայի հրապարակը ողողելով աժան ապրանքներով, ապրանքներ, որ գործարանին դուռը 25-էն մինչեւ 50% աւելի կարժեն քան Լոնդոն կամ Պարիզ։ Ասկից զատ արտադրող երկիր մէ, որ հեռուն, աշխարհի չորս անկիւնները շուկաներ կը փնտռէ եւ զինուորական ամենակարող ուժ չունի, չը կրնար ստիպել աշխարհի բոլոր ազգերը, որ իր ապրանքներուն առջեւ ազատ բանան իրենց դռները, երբ ինք իր ուզած ծանր մաքսերը կառնէ նոյն մարդոց արտադրութիւններէն։ Մաք-Քինլիի քաղաքական իմաստութիւնն էր ըմբռնել իրաց վիճակի եւ դարմանին աշխատել, դարման մը, որ իր մէջ կը պարունակէր Ամերիկայի հսկայ վաճառականութեան ընդարձակումն ու զարգացումը։ Սպանութեան նախորդ օրը Բուֆլոյի արուեստահանդէսը մէկ գեղեցիկ ատենախօսութեան մը միջոցին նախագահը բացատրեց իր գաղափարները, որոց մէջ յատակ կերեւէին իր բարձր ըմբռնումները ընդհանուր քաղաքակրթութեան եւ տարբեր ազգերու մէջտեղը առեւտրական շահերու նոյնութեան վրա, հոն երբեմն մաքսապաշտ կը ներկայանար իբր ջատագով չափաւոր ազատ վաճառականութեան, ազգերու մէջ առեւտրական հաւասարութեան։ Իր երկրին շահերէն վերջ մարդկութեան շահերն ալ կը մտածէր եւ ասով ցոյց կուտար թէ ինք հակցած էր թէ երկրի մը իրական շահը միշտ համաձայն է ընդհանուր մարդկութեան շահերուն։ Ցաւալի է, որ այդ գեղեցիկ ճառը արտասանող մարդը, դեռ պատեհութիւն չունեցած իր սկզբունքները գործի դնելու, զոհ գնաց մարդասպան գնդակին։

Այս օրերս շատ խօսուեցաւ նաեւ կայսերական քաղաքականութեան մը մասին, որուն հեղինակը կը համարվի Մաք-Քինլի. խնդիրը շատ կնճռոտ է, երկու կողմէն ալ նկատվելիք կարեւոր կէտեր կան, եւ դեռ քանի որ փորձի շրջանը անցած չէ, հարեւանցի ծանօթութիւն մը բաւական չէ որոշ գաղափար մը կազմելու։ Իրողութիւնը այս է. Ֆիլիպեանները զէնքի ուժով հպատակութիւն ընդունեցին, Քուպա կը պատրաստուի անուանական անկախութեան մը։ Հասարակապետութիւնը աշխարհակալութեան ելնելով զինուորական փառք, նիւթական յաջողութիւն ու շահեր ապահովեց, սակայն չը դաւաճանեց իր գոյութեան հիմքերը կազմող սկզբանց։ Եթէ ամերիկական քաղաքակրթութիւնը յաջողի Ֆիլիպեան կղզիները երջանիկ ժողովուրդ մը պահել, քուպացիները դատիարակել քաղաքական անկախութիւն մը կամ ազատ կամքով Միացեալ-Նահանգաց միանալու համար, այն ատեն Մաք-Քինլիի վարչութիւնը հասարակապետութեան սահմանները ծովէ ի ծով ընդարձակած ըլլալու անջնջելի փառքը պիտի վայելէ. իսկ եթէ ամերիկեան լուծը նոր ստացուած կղզիներու մէջ համանիշ պիտի դառնայ ապստամբութեան, դժգոհութեան կամ խռովութեան, եթէ օտար գերիներ պահելու համար զինուորական ոգին պիտի վառ պահուի, խաղաղ երկիրը բանակի մը եւ նաւատորմիղ մը բեռը պիտի շալկեն, այն ատեն իրաւացի պիտի ըլլան ծերակոյտի անդամի մը գուշակութիւններ—«Սպանացիք պիտի ըսեն՝ Միացեալ-Նահանգաց կործանումը սկսաւ Ուիլեամ Մաք-Քինլիի օրէն»։

Նոր նախագահը յայտարարած է թէ ինք իր նախորդին ուղղութիւնը պիտի շարունակէ. աշխարհին կը մնայ սպասել տեսնելու, թէ ինչ պիտի ըլլան այս քաղաքականութեան յառաջ բերելիք արդիւնքները։

Ինչ որ ալ լինի ապագայի վճիռը կայսերականութեան վրա, կայսերական նախագահն անկէ միշտ վեր պիտի մնայ քննադատութենէ։ Անկեղծ համոզումներու, օրինակելի առաքինութեան, ուղղամիտ պարկեշտութեան տէր էր Մաք-Քինլի։ Շաբթու մը սոսկալի տանջանքի միջոցին ցոյց տուաւ հիանալի քաջութիւն, ներողամիտ հոգի եւ բարձր զգացումներ։ Սրտաճմլիկ էր կնոջ վերջին մնաս բարովը. վիրաւոր նախագահը գիտէր թէ քանի մը ժամ միայն ունի ապրելու, բռնեց իր կնոջ ձեռքերը, հրաժեշտը տուաւ իր կեանքի ընկերոջ. քանի մը ժամէն տարաբախտ կինը աչխարհի վրա մենակ էր մնացեր։ Երջանիկ է այն երկիրը, որուն հասարակաց մարդիկը ընտանեկան անարատ կեանքի տիպարներ կը հանդիսանան։

Ընդհանուր սուգին մէջ հայերն ալ ունեցան իրենց բաժինը. հանգանակութեան մը արդիւնքով Ամերիկայի հայերու կողմէն ծաղկեպսակ մը ղրկուեցաւ յուղարկաւորութեան։ Զանազան քաղաքներու հայ եկեղեցիները հոգեհանգիստ կատարեցին, սակայն, պէտք է ըսել, օտար գաղթականութիւններ այնքան առաջ էին մեզնէ եւ իրենց կարգադրութիւններ այնքան ուշադրաւ ու կատարեալ էին, որ հայերի անունը գրեթէ չը յիշուեցաւ։

Նոր նախագահի մասին կը գրեմ ուրիշ առթիվ։ Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական կառավարութիւնը հրատարակել է մօտ օրերումս այն կորուստների ցանկը, որ ունեցել է անգլիական զօրքը անգլո-բօէրական պատերազմի սկզբից մինչեւ հիմա։ Այդ կորուստները Էլանդս-Լագտէի կռիւից սկսած մինչեւ սեպտեմբերի վերջը հաւասար են 75,562 մարդու, որոնցից 57,000 օֆիցեր եւ զինուոր ուղարկված են Անգլիա, որպէս ինվալիդներ. հարաւային Աֆրիկայում սպանված են 824 օֆիցեր եւ 16,648 զինուոր. գերի են տարված 7 օֆիցեր եւ 613 զինուոր։ «Standard» լրագիրը, առաջ բերելով այս լուրերը, ասում է, թէ անհրաժեշտ է որքան կարելի է շուտով վերջ դնել այս կործանիչ պատերազմին։

—Կ. Պոլսից գրում են «Münch. Allg. Zeitung» լրագրին, թէ Իեմէնից ստացված մասնաւոր նամակները հաղորդում են, որ անկարգութիւններ են տեղի ունենում անգլո-թիւրքական սահմանի վրա Արաբիայում։ Անգլիացիները շատ անգամ խախտել են այդ սահմանը։ Դարիա մարակոյը ուժակոծելիս, որ գտնվում է թիւրքական հողի վրա, նրանք գործ էին ածում ոչ միայն պայթուցիկ գնդեր, այլ եւ լեդդիտով լցված ռումբեր, որոնք տարածում էին խեղդող գազեր։ Բացի սրանից նրանք գրաւում էին թիւրք բանտարկեալներին՝ մտնելու անգլիական ծառայութեան մէջ։ Սահմանին մօտիկ ապրող ցեղերից շատերը արդէն ապստամբել են թիւրքերի դէմ։ Նրանց ճնշելու համար ուղարկված են 9 բատալիօն եւ թնդանօթներ։ Անիսի արեւմտեան կողմում գտնվող շրջաններում եւս ապստամբութիւն է տիրում։

—Իրլանդացի պատգամաւոր Օ'Կոննոր մօտ օրերս մի ճառ արտասանեց Լիվերպուլում, որի մէջ յայտնեց թէ, չը նայելով որ իրլանդական ազգային կուսակցութեան եւ ազատամիտների մէջ կարծիքների տարբերութիւններ կան մի քանի կէտերում, այսուամենայնիւ այդ երկու կուսակցութիւնները համակարծիք են ազատամիտների ծրագրի միւս բոլոր կէտերում եւ. եթէ երբ եւ իցէ ազատամիտները իրանց ձեռքն առնեն Գլադստոնի ժառանգութիւնը, նրանք կարող են յոյս ունենալ, որ իրլանդացիները կաջակցեն նրանց։

—Ֆրանսիական լրագիրների մէջ կարդում ենք. «Կ. Պոլսի ռուսաց դեսպան Զինովիէվը յանձնեց սուլթանին մի շատ խիստ ծանուցագիր, բողոքելով այն միջադէպի մասին, որ տեղի է ունեցել Վան քաղաքում այդտեղի ռուսաց հիւպատոսի եւ Մուշի սանջակի մութեսարիֆի մէջ։ Հիւպատոս պ. Բօժանովսկին գնացել էր Վան քննութիւն կատարելու կոտորածների մասին, բայց հէնց որ հասաւ, մութեսարիֆը յայտնեց, որ նրա հիւպատոսական պաշտօնը Մուշի գաւառի մէջ անզօր է, հետեւաբար եւ նա թոյլ չի տայ, որ ռուսական դրօշակը ծածանվի Վան քաղաքում։ Հիւպատոսը ուշադրութիւն չը դարձրեց այդ յայտարարութեան վրա եւ բարձրացրեց դրօշակն ու 12 կոզակներից բաղկացած մի խումբ պահապան դրեց նրան, մի եւ նոյն ժամանակ յայտնեց մութեսարիֆին, որ անձամբ նա պատասխանատու կը լինի եթէ որ եւ է դէպք պատահի։ Հիւպատոսը յայտնեց դէպքը եւ դեսպան Զինովիէվին, որն ուղարկել տուեց Մուշ 24 կոզակների մի խումբ»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 հոկտեմբերի

ՍԱՐԱՏՕՎ։ Գիւղացիների ազատութեան քառասնամեայ տարեդարձը յաւերժացնելու համար գաւառական զէմստվոն հիմնեց 10,000 բուբլու դրամագլուխ նպաստներ տալու գիւղական երեխաներին միջնակարգ եւ բարձրագոյն դպրոցներում կրթութիւն ստանալու համար եւ բացում է չորս գիւղերում երկդասեան դպրոցներ։

ԲՕՐԻՍՕԳԼԷԲՍԿ։ Զէմստվօի ժողովը որոշեց երկրագործական գործիքների պահեստին կից Բորիսօգլէբսկում բանալ գրքերի պահեստ։ Որոշված է դրա համար 1000 բուբլի։

ՄՕՍԿՎԱ։ Հոկտեմբերի 2-ին նահանգական դատարանը քննում էր այն գործը, որով «Русскій Листокъ» լրագրի խմբագիր-հրատարակիչ Կազէցկի մեղադրում է Սերգէյ Շարապովին, «Русское Слово» լրագրի նախկին խմբագիր Կիսելէվին եւ հրատարակիչ Սիտինին բամբասանքի մէջ. բամբասանքի բովանդակութիւնն այն էր, որ Շարապով «Русское Слово»-ի մէջ ակնարկել է, թէ Կազէցկի մասնակցել է Վիսօցկիի ֆիրմայի վրա չանտաժային արշաւանքին։ Շարապով իրան հաղորդած փաստերը կեղծ համարեց եւ այդ յայտարարութիւնը մի քանի պարբերական թերթերում տպելու պայմանով գործը հաշտութեամբ վերջացաւ։

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ ՄԱԾՆԻ ՎՐԱ։ «Frankfurter Zeitung» լրագրի Կ. Պոլսից ստացած տեղեկութիւնների համեմատ, ռուսաց դեսպանը յանձնեց սուլթանին մի ընդարձակ ծանուցագիր հայկական նահանգներում կատարված անցքերի վերաբերմամբ։ Ծանուցագիրը պահանջում է պատժել մի քանի անձանց, նոյնպէս եւ եռանդոտ միջոցներ ձեռք առնել քիւրդերի բռնութիւնների դէմ եւ ապահովել խաղաղութիւնը նահանգներում։ Գրութեան վերջում դեսպանը գանգատ էր յայտնում այն առիթով, որ Հին Սերբիայից փախած եւ սուլթանի թոյլատրեամբ այնտեղ վերադարձած սերբիական ընտանիքները կալանաւորվել են հայրենիք վերադառնալուց յետոյ։ Դեսպանը պահանջում է անյապաղ արձակել նրանց եւ երաշխաւորութիւն տալ, որ ուրիշ վերադարձող ընտանիքները չեն ենթարկվելու նոյն վիճակին։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Հոկտեմբերի 2-ին բորոյում երկիւղալի հեռադիր է ստացվել, որ Լոբինչչինսկի պէդէկատ անուանված տեղի վրա, կաղանից ներքեւ, բռնվել են մինչեւ հարիւր շոգենաւեր, որովհետեւ անհնար էր անցնել։ Սկսվեցին ստոնամանիքներ։ Բօրսային ընկերութիւնը որոշեց այսօր պատգամաւորութիւն ընտրել եւ ուղարկել այնտեղ կարգը վերականգնելու համար։ Հոկտեմբերի 2-ին եկաւ դատաստանական պալատը։ Հոկտեմբերի 4-ին կը սկսվի ինժենէր Ալէքսանդրովի եւ ուրիշների գործը, որոնք մեղադրվում են Վոլգայի վրա ճանապարհային զեղծումներ գործելու մէջ։ Գործը մի քանի օր կը տեւէ։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ։ Բացված է կանանց պաշտպանութեան ընկերութիւնը։

ՊԱՐԻԶ։ Ցունաց թագաւորը ժամանեց Պարիզ։

ԲԵՐԼԻՆ։ «Reichsanzeiger» հաղորդում է, որ կոմս Վալդերզէէին շնորհված է «Pour le mérite» շքանշանը կաղնի տերեւներով։

ՏՈՒԼՕՆ։ Կոմս Դէլավի օդապարիկը, նկատվելով «Դիւկալլա» կրէյսերից, որ պտոյտներ էր անում ծովի վրա, վերցրին նաւի վրա գօնդոլի մէջ նստած մարդկանցով եւ բերին այստեղ։

ՎԻԵՆՆԱ։ «Wiener Zeitung» լրագրում տպված է հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը. «Էրցհէրցօգուհի Ելիսաւետա, հանգուցեալ թագաժառանգ Ռուդոլֆի աղջիկը, կայսրի բարձրագոյն համաձայնութեամբ, նշանված է պրինց Օտտօն Վինդիշգրեցի հետ»։

ԼՕՆԴՕՆ։ Նիւ-Եօրկի լրագիրների հաղորդած տեղեկութիւնների համեմատ, Ռուզվէլտ դիտաւորութիւն ունի կօնգրէսի հետեւեալ նըստաշրջանում անցկացնել օրէնքներ արեւօտների դէմ, նոյնպէս եւ օրէնքներ ներազգաղթումի (իմիգրացիա) եւ նաւատորմի ուժեղացման վերաբերեալ այն հաշուով, որպէս զի Միացեալ-Նահանգների ծովային ոյժերը գերազանցեն եւրոպական պետութիւններից իւրաքանչիւրի նաւատորմին, բացի Անգլիայից։ Ռուզվէլտ պաշտպանում է կուսակցութիւնից դուրս գտնվող պաշտօնեաներ նշանակելու սկզբունքը։ Նրա խօսքով, նա շատ շնորհակալ կը լինի ժողովրդին, եթէ վերջինս կը իրախուսէ իր գործունէութիւնը երկրորդ ընտրութիւնների միջոցով 1904 թուին, բայց նա կը հրաժարվի թեկնածութիւնից, եթէ նրա առաջարկութիւնները չեն ընդունվի։

ԼՕՆԴՕՆ։ «Times» լրագրի Սիմլայից ստացած տեղեկութիւնների համաձայն, առեւտրականները, ինչպէս միշտ, անց ու դարձ են անում Խայբէրեան ճանապարհով։ Ցեղերը ամէն տեղ հանգիստ են պահում իրանց։

«Daily Mail» լրագրին Սիմլայից հաղորդում են, որ Լեմավէրից այնտեղ հասաւ աւղանական էմիրի դեսպան գնդապետ Մահօմէդ Եօմայլ՝ հնդկական կառավարութեան հետ խորհրդակցելու համար։

3 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պօստաների եւ հեռագրատների գլխաւոր վարչութեան պետ գեներալ Պետրով, վերադառնալով արձակուրդից, ստանձնեց իր պաշտօնը։

ԿԱԼՈՒԴԱ։ Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ եւ Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Մավրիկիեւնա ճանապարհ ընկան Կոզէլսկի նահանգից։

ՄՕՍԿՎԱ։ Բացվեց նոր արական գիմնազիա առանձին տիպի կրթական ծրագրով, որ կառուցված է Մեդվէդնիկովայի միջոցներով։

ԽԱՐԿՕՎ։ Հոկտեմբերի 6-ին այստեղի առնտրաբուժական ինստիտուտը տօնում է իր գոյութեան 50-ամեակը։

ՍԻՄԼԱ։ Փոխարքան յայտնեց էմիր Խաբիբուլլային, որ ընդունում է նրան, բրիտանական կառավարութեան հաշտաձայնութեամբ, աւղանական էմիր։ Դրա հետ միասին փոխարքան հաղորդեց անգլիական թագաւորի ցաւակցութիւնը եւ բարեմաղթութիւնը։

ԲԵՐԼԻՆ։ Նիւ-Եօրկից «Վաֆֆան» գործակալութեան ստացած տեղեկութիւնների համեմատ, ամէրիկական արտահանող առեւտրականները գանգատվում են այն բանի առիթով, որ գերմանացիները գրաւեցին ռուսական շուկան այն բանից յետոյ, երբ Ամէրիկայում լրացուցիչ հարկեր դրվեցին ռուսաց չաքարի վրա։ Արտահանող առեւտրականները դիտաւորութիւն ունեն միաբան միջոցներ ձեռք առնել իրանց շահերը պաշտպանելու համար։ Ի միջի այլոց, դիտաւորութիւն կայ ճնշում գործ դնել կօնգրէսի վրա՝ մաքսային օրէնքները վերաքննութեան ենթարկելու համար։

ՄԱԴՐԻԴ։ Սեվիլում վերսկսվեցին անկարգութիւններ, որի պատճառով պաշարման դրութիւն է մտցրված։ Ցուզմունքներ են տեսնվում Անտալուզիայի ուրիշ տեղերում եւս։

ՊԱՐԻԶ։ Մինիստրների խորհրդում վճռված է մերժել յանձնաժողովի արած կրճատումները հոգեւոր գործերի վարչութեան բիւդժէտի մէջ, եւ այն կրճատումները, որոնք վերաբերվում նոյնպէս են պապի մօտ գտնվող դեսպանութեանը եւ մինիստրական հիմնարկութիւններին Արեւելքում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ

մասին խորհուրդները, ամէն տեսակ խնդիրները եւ բողոքները, նոյնպէս գործերի վարելը չքաւորների համար անվարձ է։

5-դ մաս, Կատօլիչեսկայա փողոց, տ. 25։
2—3

ՎՐԱՑ ԱԶՆԻՎԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՕՆ
Ուրբաթ, հոկտեմբերի 5-ին
Հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը
կը ներկայացնէ
ԱՍԼԱՆ-ԲԱԼԱՍԻ
Դրամա 4 արար. փոխ. Ա. Սարգ.-Արեւշատ.
վերջը
ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ
Վոդեվիլ 1 արար. հեղ. Եակօվլեվի, թարգմ. Վրոյրի
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբը ճիշդ ժամը 8-ին։
Տեղերի գները սովորական են։
Խումբը պատրաստվում է խաղալու «Ուրուականների յետեւից» եւ «Օրլէանի կոյսը»։
1—2

Հոկտեմբերի 1-ից բացված է մոդային խանութ
,,ԱՇԽԱՏԱՆՔ"
անունով։ Ընդունվում են են պատուէրներ կանանց եւ երեխաների շորեր կարելու։ Բէքուտօվսկայա փողոց (նախկին Սադովայա), տուն № 48, Սերգիեվսկայա փողոցի հանդէպ։
(հ.) 1—4

ԱՄԵՆԱԼԱՒ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆԵՐ
Կարում են առանց որեւէ աղմուկի, դէպի երկու կողմը եւս, առաջ եւ յետ, ծախվում են հինգ տարվայ երաշխաւորութեամբ Վ. ՐԷՇԻ նոր բացված խանութում, Պեսկովսկայա փող., № 76։
1—6

Թիֆլիսի Քաղաքային
ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
նորեկ աշակերտների ընդունելութեան քննութիւնները լինելու են հոկտեմբերի 27-ին եւ 29-ին։
5—6

ՏԱՆՈՒՑՈՒՄՆ
ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՏԵԱՆՈՒՄ
Հոկտեմբերի 12-ին եւ 15-ին, առաւօտեան ժամը 10-ին, նշանակված է
ԱՃՈՒՐԴ եւ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ
Ալէքսանդրօպօլի եւ Կարսի վիճակների եկեղեցիների մոմավաճառութեան կրպակները երեք տարի ժամանակով կապալով տալու։ Ցանկացողները կարող են պայմանների հետ ծանօթանալ ամէն օր, առաւօտեան ժամը 10-ից սկսած։ Բայտարարութիւններ ընդունվում են եւ կնքված ծրարով։
2—3

Լոյս է տեսել եւ ծախվում է արդէն
,,ՎՏԱԿ"
Գրական-բանասիրական ժողովածու նուիրված Գր. Զանչեանի յիշատակին
Խմբագրութեամբ Վ. Փափազեանի
Արդիւնքի 2/3 մասը յատկացրած է որբերին եւ 1/3 մասն աշխատակցող գրողներին։ Ժողովածուի ծախելու իրաւունքը նոր միայն ստացած լինելով, սեպտեմբերի 25-ից պօստն է գցվում բոլոր բաժանորդների համար։
Ժողովածուի գինն է այժմ 1 ր. 50 կ. Թիֆլիսում, 2 ր. Թիֆլիսից դուրս։ Դիմել միմիայն «Տարազի» խմբագրատուն՝ պ. Արշակ Մեհրաբեանին։ Ուղարկվում է նաեւ վերադիր վճարով։ Գումարով գնողներին զեղչ է լինում։
2—5

Թիֆլիսի Առաջին Գորգերի Արհեստանոցը
Տեղափոխվել է Բարեատինսկայա փողոց, № 10։
Ընդունվում են աշակերտուհիներ Զրի, 9 տարեկան հասակից։ Ցանկացողները կարող են դիմել իշխ. Մ. Թուժանեանին ամենայն օր, երեկոյեան ժամը 4-ից մինչեւ 6-ը։ Արհեստանոցը յանձն է առնում նաեւ հին գորգերի կարկատելը։ (հ. չ. ե.) 1—3

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԵՂԲ. ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑ
Թիֆլիսի բաժանմունք Բաքուում։ Պարապետ։
Պատիւ ունենք յայտնելու, որ մեր խանութում վաճառվում են ամէն տեսակ պատրաստի սպիտակեղէն կանանց եւ տղամարդկանց, փուֆայկաներ, չուլկիներ, նասկիներ, ձեռնոցներ, միտաւի կլէօնկաներ սեղանի համար։ Նոյնպէս բաւթաներ, դայթաներ սեփական գործարանում պատրաստված, կանանց գլխի սարքեր, այսինքն չիքիլաներ, հաշիաներ, մետաքսէ աղլուխներ եւ այլն։
ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ ԵՒ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ
1—10

Սարգիս Վ. Աբրահամեան
Адр. Сололаки, уголъ Гановской и Садовой, д. Маркарова, № 27 и 31.
Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ
1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ շոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտաւորեալների օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։
Հասցէն՝ ՍՕԼՕԼԱԿ, Գանօվսկայա եւ Սադովայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի №№ 27 եւ 31։
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։
25—25

ԲԺԻՇԿ ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏԸ
Ցանձնված է Թիֆլիսում Կենտրօնական գրավաճառանոցին,
ուր հրաւիրվում են գիմել ցանկացողները
ՆՈՐԵՐՍ ԼՈՑՍ ՏԵՍԱՆ՝
«Մարմնամարզութիւն» (25 պատկերով)—գինն է 20 կոպ., «Մարմնամարզութեան աղիւսակ-պատկերներ»—գ. 10 կ., «Ժառանգականութիւն եւ դաստիարակութիւն»—գ. 15 կ. եւ «Մանկավարժական հանառօտ զրոյցներ»—գ. 15 կ. Նաեւ միւս աշխատութիւնները.—«Առողջ հոգին առողջ մարմնի մէջ»—գ. 10 կ., «Գեղձախտ—զոլոտուխտ»—գ. 10 կ., «Ո՞վ է յանցաւորը»—գ. 15 կ., «Միֆիլիս»—10 կոպ., «Մեր նեարդերը»—10 կ. եւ «Վենեերական ախտեր»—գ. 5 կոպ։
Գրավաճառներին եւ գումարով գնողներին զիջումն է լինում։
Դիմել՝ Въ Тифлисъ. Въ Центральную книжную торговлю. (հ.) 2—10

Ի. ԵԱ. ԲՐՕՆ-ՖՕՆ-ԲՐԷՆՆԷՐԻ ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Նիկոլաեւսկայա, № 88.
Խնդիրքների ընդունելութիւնն սկսված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 10-ին։ Դասընթացքը բաժանված է կիսամեակների։ Պարապմունքները տեղի են ունենում ճաշից յետոյ։ Վճարը ամբողջ դասընթացքի համար 60 ռուբլի։ Ընդունվում են երկու սեռի անձինք։
ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ԵՒ ԴԱՍԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ
1) Հաշուապահութիւն
2) Բանկային գործ
3) Առեւտրական թուաբանութիւն
} Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէննէր, դասարանների հիմնադիրը.
4) Թուաբանութիւն հաշուեցոյցով։
5) Տեխնօլոգիա
6) Ապրանքագիտութիւն
} Մ. Ի. Զէնդէրի, լեռնային ինժենէր, պետական խորհրդական.
7) Թղթակցութիւն.
8) Առեւտրական օրէնքներ
9) Առեւտուր
} Վ. Ս. Մօսկալեւ, պրօկուրօրի օգնական, թ. ն. դ.
10) Գեղագրութիւն—Գ. Եա. Դիւկով, ինժենէր-երկրաչափ.
Ոչ-պարտադիր առարկաներ
1) Քրանսիական լեզու—Է. Կ. Լիոզէկ, դաս. 2-դ կլասիկ. գիմնազիայի.
2) Գերմանական լեզու—Ու. Ֆ. Գրումլիկ, դաս. Թիֆլ. բէալական ուսումնարանի.
3) Սղագրութիւն, Ի. Եա. Բրօն-ֆօն-Բրէննէր.
4) Ուսուցումն գրելու գրող մեքենայով, նաեւ կղզիակի անձանց համար։
Խնդիրքները ընդունվում են դասարանների դիւանատանը, Նիկոլաեւսկայա, № 88.
25—25

Բժիշկների եւ կրնիխտների բազմաթիւ փորձերը
ցոյց են տուել, որ
,,ՍՕՄԱՏՕԶԱՆ"
ԱՄԵՆԱԼԱՒ ՍՆՆԴԱՐԱՒ ԵՒ ԿԱԶԴՈՒՐԻՉ ՄԻՋՈՑՆ Է
արիւնպակասութեան, թուլութեան, ջղային հիւանդութիւնների և առհասարակ բոլոր տեսակ ուժասպառ անող հիւանդութիւնների դէմ։ ԾԱԽՎՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԴԵՂԱՏՆԵՐՈՒՄ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ։ Սօմատօզայի ներգործութեան նկարագրութիւնը և բազմաթիւ բժիշկների յայտնած կարծիքները նրա մասին, առաջին պահանջով, ձրիաբար ուղարկվում է
ՖՐԻԴ. ԲԱՅԷՐ եւ ԸՆԿ.º
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ
(Москва, Старая площадь, домъ Армандъ. Фрид. Байеръ и Кº.)
(30, 31 օգ. 5, 15, 25 սեպ. 3, 13, 23, հոկտ. 2, 12, 22 նոյ. 4, 14, 24 դեկ.)
3—14

Дозволено цензурою, Тифлисъ, 3 Октября 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.